«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի տեղակալ՝ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-11/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.01.2015թ. N 73-1/750376-15 գրությամբ ներկայացված «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.01.2015թ. N 73-1/750376-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը նույն գրությամբ Կենտրոնին է ուղարկել Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.12.2014թ. N 01/61-17713 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 20.01.2015թ. N 09/032-69 գրությամբ դիմել է «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին:

«Պառեքս-Գազ» ՍՊԸ-ն 29.01.2015թ. N 05 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունը նախորդ տարվա ընթացքում չի ունեցել նմանատիպ խախտումներ և միաժամանակ տեղեկացրել է, որ Երևանի քաղաքապետարանի գրությամբ նշված 831267 ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքներն Ընկերության կողմից արդեն իսկ ամբողջությամբ կատարվել են:

Ընկերությունը 18.02.2015թ. N 16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարել է բոլոր շինարարական աշխատանքները, ինչի մասին կարող են վկայել Երևանի քաղաքապետարանի շինարարության և բարեկարգման վարչությունը և շինարարությունը վերահսկող կազմակերպությունը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ աշխատանքները կատարվել, սակայն չեն արձանագրվել՝ կից ներկայացնելով վերը նշված աշխատանքների վերաբերյալ կատարողական ակտ N 3-ը, որտեղ նշվել է, որ կատարվել են՝

- պատերի և շեպերի երկու լատեքսային ներկով՝ 324,1մ^2 աշխատանք (ըստ Ընկերության՝ փաստացի կատարվել է 350,4մ^2)
- առաստաղների ներկում լատեքսային ներկով՝ 160,5մ^2 (ըստ Ընկերության՝ փաստացի կատարվել է 190,5մ^2)
- պատերի և շեպերի երկու լատեքսային ներկով (2-րդ հարկի հարդարման աշխատանքներ)՝ 762,5մ^2 (ըստ Ընկերության՝ փաստացի կատարվել է 932մ^2)

• պատերի ներկ ու յուղաներկով՝ 504,7 մ^2 (ըստ Ընկերության՝ փաստացի կատարվել է 620մ^2)

3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.01.2015թ. N 011/032-67 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

Պատվիրատուն 29.01.2015թ. N 02/61-2741h գրությամբ տրամադրել է Երևանի քաղաքապետարանի և «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի միջև 08.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) և Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ հիմքերը:

Վերը նշված նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ ծավալաթերթ 4-ով (այսուհետ՝ Ծավալաթերթ) նախատեսված 32837126 ՀՀ դրամ ընդհանուր արժեքի աշխատանքներից 831267 ՀՀ դրամի չափով աշխատանքներն Ընկերության կողմից չեն կատարվել, ինչի արդյունքում Պայմանագիրը միակողմանի լուծվել է:

Կենտրոնը 02.03.2015թ. թիվ 011/032-361 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով հայտնել, թե Ընկերության կողմից 831267 ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքների մեջ Ծավալաթերթով նախատեսված ինչ աշխատանքներ են ներառված:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը՝ Երևանի քաղաքապետարանը 20.03.2015թ. թիվ 02/61-12840h գրությամբ ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի և «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի միջև 08.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից 831267 ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքների ծավալներն՝ ըստ համապատասխան աղյուսակի:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-11/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 15.01.2015թ. N 73-1/750376-15 գրությամբ «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի միջև 08.04.2014թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի h.1 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար սահմանված ծավալը կազմել է 32837126 ՀՀ դրամ, աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, ավարտը՝ 25.08.2014թ.:

3. Ընկերությունը 18.02.2015թ. N 16 գրությամբ Կենտրոնին է տրամադրել 14.07.2014թ., 28.08.2014թ. և 29.12.2014թ. երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները՝ համապատասխանաբար 1677308 ՀՀ դրամի, 12288254 ՀՀ դրամի և 18040297 ՀՀ դրամի չափով (ընդամենը՝ 32005859 ՀՀ դրամ) կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Երևանի քաղաքապետարանը 20.03.2015թ. թիվ 02/61-12840h գրությամբ Կենտրոնին տրամադրել է Երևանի քաղաքապետարանի և «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի միջև 08.04.2014թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից Ծավալաթերթով նախատեսված 831267 ՀՀ դրամի չափով թվով 63 չկատարված կամ թերի կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ աղյուսակը, համաձայն որի՝

հ/հ	Աշխատանքի անվանումը	Ընդ ծավալաթերթի	Կատարված ծավալը	Չկատարված ծավալը
1.	Տանիքի փայտե կոնստրուկցիաների իրականացում նոր փայտանյութով	9 մ^3	7 մ^3	2 մ^3
2.	Տանիքածածկի իրականացում պրոֆիլավոր ԿՊ 35-0,55 մմ ցինկապատ թիթեղով՝ (կավարամած+գագաթի տախտակ 3.90+1.16մխ, գագաթի թիթեղ 32.8քմ և օդափոխության պատուհանների թիթեղ 37.5քմ)	745 մ^2	730 մ^2	15 մ^2
3.	Ջերմամեկուսիչ խարամի շերտի փռում	58,5մ^3	00 մ^3	58,5մ^3
4.	Գոլորշամեկուսիչ շերտի իրականացում 1 շերտ իզոգամով	585մ^2	582 մ^2	3 մ^2
5.	Ձյուն պահող հարմարանք ներկված	45գծմ.	0գծմ.	45գծմ.
6.	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանություն	9 մ^3	7մ^3	2 մ^3
7.	Կավարամածի և տախտակամածի հրապաշտպանություն	871 մ^2	214 մ^2	657 մ^2
8.	Պատերից և առաստաղներից հին ներկի մաքրում	540,9մ^2	485 մ^2	55,9 մ^2
9.	Գրանիտե խճանկարային հատակի քերթատում	138,8 մ^2	27 մ^2	111,8մ^2
10.	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում չբացվող մաս	6,3 մ^2	5,67 մ^2	0,63 մ^2
11.	Պատուհանագոգերի տեղադրում	4,64 մ^2	0 մ^2	4,64 մ^2
12.	Պատուհանագոգեր 400մմ հաստ	11,6գծմ.	0գծմ.	11,6գծմ.
13.	Պրես գրանիտե հատակի իրականացում	138,8մ^2	27 մ^2	111,8 մ^2
14.	Պրես գրանիտե շրիշակների իրականացում	14,8մ^2	1,8 մ^2	13 մ^2
15.	Պատերի և շեպերի ներկում լատեքսային ներկով	350,4մ^2	324,1 մ^2	26,3 մ^2
16.	Առաստաղների ներկում լատեքսային ներկով	190,5 մ^2	160,5 մ^2	30 մ^2
17.	Մանրատախտակե հատակների քանդում	143,2 մ^2	41 մ^2	102,2 մ^2
18.	Ց/ավազե հարթաշերտի քանդում	163,4 մ^2	102 մ^2	61,4 մ^2
19.	Փայտե պատուհանների ներկում	213 մ^2	113,5 մ^2	100,25 մ^2

	պատուհանագոգերի հետ միասին			
20	Փայտե դռների վերանորոգում	20 հատ	15 հատ	5 հատ
21.	Փայտե դռների ներկում	88,56 մ²	54 մ²	34,56 մ²
22.	Փայտե շրիշակների քանդում	394գծմ.	271 գծմ.	123 գծմ.
23.	Ց/ավազե հարթաշերտի իրականացում 30սմ հաստ.	163,4 մ²	102 մ²	61,4 մ²
24.	Կերամիկական սալիկներով հատակների իրականացում	32 մ²	20 մ²	12 մ²
25.	Մանրատախտակե 60մմ հատակների իրականացում շրիշակները ՄԴՖ-ով 60մմ	70,6 մ²	0 մ²	70,6 մ²
26.	Մանրատախտակե հատակների լաքապատում	386,5 մ²	0 մ²	386,5 մ²
27.	ՄԴՖ-ով նոր 60մմ շրիշակների տեղադրում	250,8գծմ.	0 գծմ.	250,8գծմ.
28.	Պատերի ց/ավազի իրականացում	44 մ²	38 մ²	6 մ²
29.	Կերամիկական սալիկներով պատերի երեսպատում	44 մ²	30 մ²	14 մ²
30.	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 10Ա	1 հատ	0հատ	1հատ
31.	Վարդակ հողանցման հպակով երկբևեռ շրջանակով	105 հատ	48 հատ	57 հատ
32.	Անջատիչ 2 ուղղությամբ պատի մեջ տեղադրվող	8 հատ	0 հատ	8հատ
33.	Լուսատու լյումինեսցենտային լամպով 2Х36Վտ	81 հատ	79 հատ	2 հատ
34.	Մոնտաժային տուփ	150 հատ	105 հատ	45 հատ
35.	Ձևավոր մասեր	0,02տ.	0,01տ.	0,01տ.
36.	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ20*3.4	478մ.	179մ.	299մ.
37.	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ25*4.2	206մ.	186մ.	20մ.
38.	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ32*5.4	70մ.	60մ.	10մ.
39.	Պոլիպրոպիլենային տաք ջրի խողովակների մոնտաժում Φ40*6.7	57մ.	36մ.	21մ.
40.	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր	387 հատ	310 հատ	77 հատ

41.	**Փական ամերիկանկա Φ40**	10 հատ	7 հատ	3 հատ
42.	**Փական ամերիկանկա Φ25**	6 հատ	3 հատ	3 հատ
43.	**Մետաղական պատյան Φ133*4**	1,8մ.	0 մ.	1,8մ.
44.	**Մետաղական պատյան Φ159*4.5**	0,5մ.	0 մ.	0,5մ.
45.	**Մետաղական պատյան Φ108*4.5**	0,4մ.	0 մ.	0,4մ.
46.	**Մետաղական պատյան Φ89*3.5**	4,6մ.	0 մ.	4,6մ.
47.	**Մետաղական պատյան Φ76*3.0**	4,5մ.	0 մ.	4,5մ.
48.	**Խողովակների յուղաներկում 2 անգամ**	2,1մ^2	0 մ^2	2,1մ^2
49.	**Համակարգի փորձարկում**	827 մ.	470 մ.	357մ.
50.	**Խողովակների ամրացում**	827 հատ	470 հատ	357 հատ
51.	**Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ25*4.2**	20մ.	0 մ.	20մ.
52.	**Պողպատե գազատար խողովակների տեղադրում d=57x3մմ**	2գծմ.	1գծմ.	1գծմ.
53.	**Պողպատե խողովակից պատյան Φ50**	1մ.	0 մ.	1մ.
54.	**Հենարանների բետոն**	13 մ^3	5 մ^3	8 մ^3
55.	**Մետաղական հենարանների մոնտաժում**	0,174տ.	0,0435տ.	0,1305տ.
56.	**Մետաղական հենարանների արժեքը Φ100*3**	24 գծմ.	6գծմ.	18գծմ.
57.	**Մետաղական հենարանների մոնտաժում**	0,58744տ.	0,17435տ.	0,41309տ.
58.	**Մետաղական հենարանների արժեքը Φ57*3**	119 գծմ.	38 գծմ.	81 գծմ.
59.	**Մետաղական հենարանների արժեքը Φ50*3**	12 գծմ.	0 գծմ.	12 գծմ.
60.	**Մետաղական խողովակների արժեքը Φ57*3**	310 գծմ.	237 գծմ.	73 գծմ.
61.	**Խողովակների ներկում 2 անգամ**	93 մ^2	63 մ^2	30 մ^2
62.	**Խողովակների փչամաքրումով**	331,5գծմ.	261 գծմ.	70,5 գծմ.
63.	**Ձևավոր մասեր**	0,05տ.	0,031տ.	0,019տ.

5. Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերությանը հասցեագրված 30.12.2014թ. թիվ 61/4041 գրությամբ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի

լուծել է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ և Պայմանագրի 3.1.7 կետերի հիմքով:

6. Պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 3300000 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տուժանք, ինչի վերաբերյալ Պատվիրատուն 30.12.2014թ. թիվ 61/4041 գրությամբ տեղեկացրել է Ընկերությանը, սակայն Ընկերության կողմից մինչև օրս այդ գումարները չեն վճարվել:

5. ՍՑ-ԳԲԽ-11/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.01.2015թ. N 73-1/750376-15, Երևանի քաղաքապետարանի 30.12.2014թ. թիվ 61/4041, 29.01.2015թ. թիվ 02/61-2741h և 20.03.2015թ. թիվ 02/61-12840h գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի 29.01.2015թ. N 05 և 18.02.2015թ. N 16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-14/41-5» ծածկագրով պայմանագիրը և Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1.3 կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Այսպիսով, «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, մասնավորապես՝ Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի հ.1 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետում չի կատարել կամ թերի է կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Ծավալաթերթով նախատեսված թվով 63 կատարման ենթակա աշխատանքները (831267 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով):

Ինչ վերաբերում է «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ի այն պնդմանը, որ 831267 ՀՀ դրամի չափով չկատարված աշխատանքներն արդեն իսկ Ընկերության կողմից կատարվել են ամբողջությամբ, ապա վերջինիս կողմից տրամադրված հանձնման-ընդունման արձանագրությունների և կատարողական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված 32837126 ՀՀ դրամ աշխատանքներից կատարվել են ընդամենը 32005859 ՀՀ դրամի չափով աշխատանքներ, իսկ 831267 ՀՀ դրամի չափով աշխատանքներ չեն կատարվել:

Նկատի ունենալով, որ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտել է և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրվելն Ընկերության կողմից չեն վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 15.01.2015թ. N 73-1/750376-15 գրությամբ «Պառեքս-Գազ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03527967) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում

Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-11/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան